

Պետական կառավարման ակադեմիայի կարիերայի կենտրոնը շտապում է մեկնարկել երկար սպասված թրեյնինգի շարք, որը որակապես նոր մակարդակ կսահմանի շարունակական մասնագիտական զարգացման ճանապարհին: Վստահ եմ, որ շատերն արդեն իսկ գիտեն՝ ով է թրեյնինգավարը և ինչ թեմայով ենք մեկնարկում: Եվ այսպես, ձեզ արդեն ծանոթ Շահանե Բեգլարյանը (Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի գլխավոր մասնագետ) կներկայացնի և կվարի «Կարիերայի պլանավորում/ կառավարում» թեմայով թրեյնինգը:

Թրեյնինգի առանձնահատկությունները.

- Պրակտիկ
- Ինտերակտիվ
- Արդյունավետ

Սա յուրօրինակ մի նախագիծ է, որի ընթացքում բազմաթիվ հետաքրքիր փորձերի, մեթոդների միջոցով բացահայտելու ենք կարիերայի պլանավորման/ կառավարման գործընթացը պայմանավորող գործոնները, ինչի արդյունքում կհստակեցվեն կարիերայի կառավարման ուղիները: Թրեյնինգի վերջին թեման կանցկացվի բացօթյա տարածքում:

Գրանցումը պարտադիր է (lena.grigoryan@paara.am էլ. հասցեով ուղարկել անուն, ազգանուն, հեռախոսահամար), տեղերը սահմանափակ են (խմբում մասնակիցների քանակը 20-25 հոգի):

Կից ներկայացնում ենք թրեյնինգի թեմաները.

- Նպատակի սահմանում, անձի ինքնագնահատում և swot (ուժեղ) վերլուծություն
- Անձի մոտիվացիա
- Կարիերայի պլանավորում/ կառավարում
- Արդյունավետ թիմի ստեղծում

Գրանցման վերջնաժամկետ՝ 24.03.2016թ.:

Թրեյնինգի կազմակերպման ժամանակացույցը որոշելու նպատակով հանդիպում ենք մարտի 25-ին՝ 12:00-ին, Ակադեմիայի դահլիճում (3-րդ հարկ):